ԱՄՆ-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Ստորև հատվածաբար հրատարակում ենք սույն թվականի մայիսի 12-ին Քեմբրիջի Ս. Երրորդություն եկեղեցում տեղի ունեցած ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի 86-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովի ժամանակ վերոհիշյալ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի ուղերձը:

ԽՄԲ.

Սիրելի պատգամավորներ,

Կողջունենք ձեզ հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսի, 86-րդ թեմական պատգամավորական այս ժողովին, որ կնշե նույն ատեն իննսուներ-որդ տարեդարձը մեր թեմին հաստատման Ամերիկայի մեջ:

1889 հուլիս 28-ին, երբ առաջին ս. պատարագը մատուցվեցավ Մասաչուսեց նահանգի Ուստր քաղաքին մեջ, հայերու թիվը Ամերիկայի մեջ կհաշվեին հազար հոգի: Ներկայիս մեր թիվը մեկ միլիոնի կմոտենա:

Սկզբնական տարիներու փոքրաթիվ համայնքը այսօր կհանդիսանա ամենեն հայահոծ գաղութը Սփյուռքի մեջ: Մեր հայրենիքեն դուրս ան կը-ներկայացնե ամենակարևոր զանգվածը մեր ժողովուրդին: Ուստի Սփյուռքի մեջ հայկական հավատքին և մշակույթին պահապան ստիպողական պա-տասխանատվությունը կծանրանա ուսերուն վրա մեր հայ-ամերիկացի գա-ղութին:

...Անցյալ տարի Սփրինկֆիլտի մեջ ակնարկեցինք այն մարտահրավեր-ներուն, զորս Հայ Եկեղեցին և գաղութը պետք է դիմագրավեն: Խոսեցանք տագնապներու և կարիքներու մասին, վերակենդանացնելու համար մեր կրոնական և մշակութային արժատները: Հիշեցինք կարիքը ղեկավարներու, որոնք շինիչ մոտեցումով աշխուժացնեն մեր հայտագիրները և օգնեն լու-ծելու մեզ տագնապող հարցերը:

Հոգևոր զարթնումի կարիքը զգալի էր: Եվ այդ զարթոնքը եկավ մեզի Ս. Էջմիածնեն, անձովը մեր սիրելի Հայրապետին, որ նոր գիտակցություն մը հառաջացուց մեր հայ քրիստոնեական հավատքի և մշակույթի հանդեպ, Իր պատմական այցելությամբը անցյալ հոկտեմբերին Ամերիկայի մեջ:

Արդարև, մեր հողեն կբխին մեր ժողովուրդի կյանքի ավիշը և մեր հա-

վատքն ու մշակույթը սնուցանող և զորացնող ազդակները: Ահա այս լույսին տակ կարժևորենք և կգնահատենք երրորդ հովվապետական այցելությունը Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոսին, մեր թեմին շնորհված:

Իր Հայրապետական ներկայությամբ կրկին հաստատվեցավ այն իրողությունը, թե Ամենայն Հայոց Հայրապետը Իր անձով կներկայանա կեդրոնաձիգ և մագնիսող ուժը մեր ժողովուրդին: Ան կիզակետն է աշխարհի մեջ սփռված հայ կյանքին: Ամերիկայի մեջ Իր ներկայությամբ թարմ եռանդ հառաջացուց մեր ժողովուրդին մեջ:

...Ինչպես այսօր գոյություն ունեցող կրոնական բազմաթիվ խումբեր (Հռովմեական Կաթոլիկ, Հույն Օրթոդոքս և այլազան Բողոքական խմբավորումներ), մեր Եկեղեցին ևս կզգա ճնշումը հոգևորականներու պակասին: Մեր եկեղեցականները հաճախ ծանրաբեռնված են թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնական պարտականություններով: Մեր երիտասարդներեն շատեր անհաղորդ են մեր Եկեղեցվո և ազգային ժառանգության գանձերուն և ենթակա են ձուլումի: Ի տարբերություն շատ մը ուրիշ հարանվանություններուն, մեր Եկեղեցին հավելյալ պարտականությունը ունի պահելու և կենսավորելու մեր հայ լեզուն և մշակույթը: Եվ հարցերը ավելի կենսական են դարձեր:

Արդարև, հոգեկան թմբիրե արթննալու կարիքը ստիպողական էր, և Վեհափառ Հայրապետը նոր խանդ և արթնություն սփռեց հանդեպ մեր հայկական ինքնության: Իր օրհնության խոսքերը, Իր Աջին հպումը, Իր նայվածքին խաղաղ ու բարեմույն ազդմունքը, և մանավանդ կեցվածք և ուղղություն պահանջող Իր խոսքը մեր ժողովուրդին մեջ վերանորոգեց զգայնությունը հանդեպ իրենց յուրահատուկ հայկական ինքնության, անձնականության, և շեշտեց միասնականության սնհրաժեշտությունը՝ Ամերիկայի մեջ տևականացնելու համար դարերու խորքեն մեզի հասնող մեր հավատքն ու մշակույթը:

Մեկ ամիս տևող Իր այցելության ընթացքին, ուր որ գնաց, Վեհափառ Հայրապետը հավասարապես ներշնչեց մեր ժողովուրդին չափահասներն ու երիտասարդները, պատանիներն ու մանուկները՝ սիրելու ու գնահատելու իրենց հայ ինքնությունը և գիտակցելու, որ իրենք կապված են աշխարհի մեջ ցրված իրենց եղբայրներուն և քույրերուն, իրարու հետ շաղկապված լինելով Ս. Էջմիածին Մայր Եկեղեցիին ծոցին մեջ: Ամենայն Հայոց Հայրապետը արդարև կներկայանար իբրև «Հայաստանը Ամերիկայի մեջ»:

Նորին Սրբության ազդեցության շրջանակը կանդրանցեր մեր գաղութը: Վեհափառը իսկապես կմուրմնացներ հայկական հոգին, Իր բոլոր հանդիպումներուն ընթացքին կրոնական պետերու հետ և կամ քաղաքական և հանրային պաշտոնակալներուն հետ, ինչպես նաև Միացյալ Ազգաց Ներկայացուցիչներուն, և արդարև Ամերիկայի Միացյալ Նահանգներու նախագահին ներկայության: Իրմով ամենքս հպարտ էինք մեր հայությամբ:

Նորին Սրբությունը մեզի թողուց մեծ հրիտակ մը: Իբրև հայեր, մենք բոլորս ալ պարտինք ներկայացնել «Հայաստանը Ամերիկայի մեջ», մեր ընտանիքներուն, մեր բարեկամներուն, մեր դրացիներուն հետ հարաբերությանց ընթացքին: Նույն ըմբռնումով պետք է կազմակերպենք մեր բոլոր ձեռնարկները: Շատ հստակ նպատակադրումներ պետք է հետապնդենք մեր գործունեությանց և կազմակերպական կյանքին մեջ: Անոնք պետք է զորացնեն մեր արմատները և միևնույն ժամանակ պետք է ներկայացնեն

և դրսևորեն կարելի ազնվագույն տիպարը մեր հայկական հավաքական ինքնության: Ինչպես Վեհափառ Հայրապետը մեզի ըսավ. «Մենք յուրահատուկ ժողովուրդ ենք»: Մենք կգոյատևենք, մենք կշարունակենք աճիլ ու ծաղկիլ, հակառակ պատմության վերիվայրումներուն, ցեղասպանության, հալածանքներուն, մեր պապենական հողերու անհիտումին:

Ներկայիս մենք դեմ-հանդիման կգտնվինք արագ փոխվող աշխարհի մը մարտահրավերներուն, որոնք կսպառնան ճնշել մեր կրոնական հավատալիքներուն, մեր ընտանեկան սրբության կապերուն, մեր երիտասարդության: Հակառակ այս բոլոր տագնապներուն, մենք մեկ ենք ազգովին: Այստեղ՝ Ամերիկայի մեջ, մենք միայն մեկ ճյուղն ենք Ս. Էջմիածնի նվիրական արմատներուն և կոճղին:

Անձեր կան, որոնք Սփյուռքի մասին կխոսին որպես թե անջատ ինքնություն մը ըլլար, և կամ հայերը Սփյուռքի մեջ մի կերպ ինքնիշխան լինեին: Պարտինք հիշել, թե Սփյուռքի մեր գաղութները կրնան գոյատևել որքան ժամանակ որ իրենց պապենական կապերը կպահեն Էջմիածնի հետ: Անգամ մը, որ Սփյուռքեն գաղութի մեկ օղակը և կապերը Մայր Եկեղեցիին հետ տկարանան կամ կոտրին, անխուսափելի հետևանքը կորուստ է ու մահ մշակութային ժառանգության: Նման այն ճյուղին, որ մայր ծառեն պոկված է ու կտրված:

Նորին Սրբությունը լիովին գիտակ է այն տագնապներուն, զորս մեք կդիմագրավենք: Այդ պատճառով մեծապես քաջալերված զգաց՝ ծանոթանալով մեր թեմի բազմաթիվ հայտագիրներուն և գործունեությանց և այն առատաձեռն օժանդակությանց, զորս մեր հավատացյալ ժողովուրդը կընձեռե: Թեմական հայտագիրները հաստատ ապացույց էին, թե դրական քայլեր առնված են, թե Ամերիկա բնակող հայերուն հոգատարությունը կըկատարվի Հայ Եկեղեցվո միջոցավ, տվյալ պայմաններու և ձեռնտու միջոցառումներու գործածությամբ և հոգեկան նվիրվածությամբ: ...Մեր բարերարներու քաջալերանքը և գիտակցությունը մաս կկազմե մեր ժողովուրդին աստվածօրհնյալ և ազնվական ավանդության, որ կերկարի մինչև Տրդատ թագավորի օրերը, երբ Հայոց Եկեղեցին հաստատվեցավ Հայաստանի մեջ կառուցումովը Ս. Էջմիածնի Մայր տաճարին:

* * *

Դժբախտաբար, Վեհափառ Հայրապետին այցելությունը ունեցավ նաև իր հուսախաբության պահերը: Կարելի է երևակայել Իր հիասթափումը, երբ մեր բաժանյալ եղբայրները անտեսեցին Իր անձնական հրավերը միասին աղոթելու՝ Իր այցելության առիթով մատուցվելիք ս. պատարագին: Երբ անընկատ թողվեցան միության մասին Իր կոչերը: Գուցե այն ատեն էր, որ Իր մեծագույն վախը իրականացած զգաց: Այսինքն թե Սփյուռքի մեջ մարդեր կան, որոնք կհավատան, թե իրենք իրենց ամբողջություն մըն են, միայն բարակ կապով մը կապված, այդ ալ եթե անհրաժեշտ ըլլա կապվելու, Մայր Եկեղեցիին հետ:

...Անցյալ տարվան մայիսեն ի վեր մեր թեմական միության հանձնախումբը ամեն ջանք թափեց հաղորդակցելու և վերստին կապ հաստատելու մեր բաժանյալ եղբայրներու միության հանձնախումբին հետ: Սակայն անոնց ջանքերը ապարդյուն եղան: Համենայնդեպս, մենք կհավատանք, որ ներկա կացությունը ժամանակավոր երևույթ մըն է միայն: Մեր Եկեղեց-

ովո անցյալ պատմության մեջ նման բաժանումներ տեղի ունեցած են, բայց Էջմիածինը միշտ պահած է իր դիրքը Իջյրև Մայր Աթոռ, իր անառարկելի իրավական հեղինակությամբ:

*
* *

...Ժամանակակից դեպքեր մեր Եկեղեցիին ազգային նկարագիրը ավելի ցայտուն դարձուցին: Հավանական ուրիշ Եղեռնի մը կարելիության դիմաց, որ հրապարակ դրվեցավ Ղարաբաղի շրջանի վրա իրավասության պահանջքե մը դրդված, Ամենայն Հայոց կաթողիկոսը հայ ժողովուրդին զգացումներուն թարգման հանդիսացավ, Սովետ կառավարության և ամբողջ աշխարհին տանելով Իր պատգամը:

Այստեղ՝ Միացյալ նահանգաց մեջ, ինչպես Եվրոպայի և Հարավային Ամերիկայի մեջ, հայերը արձագանքեցին իրենց ճնշյալ եղբայրներուն ու քույրերուն դատին: Մինչ ցույցերը կբազմանային Հայաստանի և Ղարաբաղի մեջ, մեր Եկեղեցին Սփյուռքի մեջ սկիզբեն հառաջապահ դիրքի վրա էր, ուրիշ կրոնական հարանվանությանց և քաղաքական կազմակերպությանց հետ: Եկեղեցին ինք նախաձեռնողը եղավ Սփյուռքի արձագանքին: Պատմական նկատվող «խաղաղ հավաքի» մը կոչին ավելի քան 5 000 հայեր պատասխանեցին, քայլելով Ս. Վարդան Մայր տաճարեն դեպի Միացյալ Ազգաց մոտ Սովետ դեսպանի տան շենքը: Ղարաբաղի հայոց ի պաշտպանություն ուրիշ հայտագիրներ ևս կազմակերպվեցան, որոնք պիտի շարունակվին:

...Որքան ժամանակ որ Ղարաբաղը մնա ազերիների հսկողության ներքև, հայերուն սիրտին վրա այդ պիտի մնա պալարոտ վերքի մը նման:

...Ղարաբաղի վերամիացման հարցը գործակցության նոր զգացում մը արթնցուց Ամերիկայի հայերուն մեջ: Հուսով ենք, որ այս փոխադարձ մտահոգությունը կշարունակվի և ի վերջո կհանգի անկեղծ, տրամաբանական և հստակ հասկացողության մը, Եկեղեցվո առաջնորդող դերի մասին Միացյալ Նահանգաց մեջ: Երանի նույն ատեն բոլոր հայերը դիմակալեն աշխարհիկ այն տագնապները, որոնք կսպառնան ճնշել մեր հայու քրիստոնեական հավատքը:

Այս բոլորը անբաժան մասը կկազմեին Վեհափառ Հայրապետի պատգամին անցյալ տարի: Մենք որոշած ենք շարունակել այդ հրահանգը և կակնկալենք, որ այս համագումարը և յուրաքանչյուր հայ այս երկրին մեջ վերահաստատե նույն նվիրվածությունը: Թերանալ ասոր մեջ կրնա սպառնալ մեր Եկեղեցիին իսկ գոյատևման, ինչպես նաև Ամերիկայի մեջ մեր հայկական մշակութային ինքնության տևականության:

Կաղոթենք, որ Տերը օրհնե ընթացքը մեր խորհրդակցությանց Իր փառքին համար, և առաջնորդե մեզ դրական կողմնորոշումներու, հաստարմատ զորացնելու համար մեր Եկեղեցին և մեր հայ քրիստոնյա ինքնությունը Ամերիկայի մեջ: